

**ՍԱՄՎԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱՎԱՍԱՐ  
ՍԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐԻՑ ՄԵԿԸ.  
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Սահմանադրական արդարադատության առավել ընդհանուր և հիմնարար նշանակություն ունեցող սկզբունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակալին քննության իրավունք»։ Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ համանման սկզբունքներ է ամրագրում նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի<sup>1</sup> 6-րդ հոդվածը։ Այս հոդվածների բովանդակությունից բխում է, որ երաշխավորման ենթակա առաջին սկզբունքն արդարադատության մատչելիության սկզբունքն է։ Վերջինս հաճախ ՀՀ Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից դիտարկվում է որպես արդարադատության մատչելիության իրավունք՝ արդար դատաքննության իրավունքի տարր<sup>2</sup>։ Սահմանադրական արդարադատության մատրելիության սկզբունքն ուղղակիորեն նախատեսված չէ ո՛չ ՀՀ Սահմանադրությամբ, ո՛չ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով<sup>3</sup>, սակայն սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է այս սկզբունքի երաշխավորմանը։ Քանի որ սահմանադրական դատարանը մասնագիտացված դատարան է, և ոչ բոլոր գործերն են ենթակա սահմանադրական դատարանի քննությանը, ապա առաջ է գալիս օրենսդրական մակարդակում, ինչպես նաև իրավակիրառական մակարդակում սահմանադրական արդարադատության մատչելիության

սկզբունքի արդյունավետ իրացման անհրաժեշտություն։

ՄԻԵԴ-ն իր բազմաթիվ որոշումներում կրկնել է, որ 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը յուրաքանչյուրի համար երաշխավորում է իր քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առնչությամբ դատարան դիմում ներկայացնելու իրավունքը։ Այս կերպ ձևավորվում է «դատարանի իրավունքը», որտեղ մատչելիության իրավունքը, այսինքն՝ քաղաքացիական գործերով դատավարություն նախաձեռնելու իրավունքը տարրերից մեկն է<sup>4</sup>։ Իր որոշումներից մեկում ՄԻԵԴ-ը նշել է, որ 6-րդ հոդվածի երաշխիքները ներառում են դատարանի առջև բարձրացված հարցի վերաբերյալ վերջնական որոշում ստանալու իրավունքը՝ ներառյալ նաև սահմանադրական բողոքի ընդունելիության և (կամ) հանգամանքների վերաբերյալ որոշումը<sup>5</sup>։ Սահմանադրական դատարանում անհատական (ֆիզիկական, ինչպես նաև իրավաբանական անձի) դիմումի ընդունելիության չափանիշները նախևառաջ նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ, որի 101-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ «Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը<sup>6</sup>»։

Միաժամանակ ՀՀ Սահմանադրությունը ՀՀ Ազգային ժողովին լիազորում է օրենքով սահմանել դատարան դիմելու կարգը։ Անհրաժեշտ է նշել, որ Սահմանադրությունն այս իրավունքը երաշխավորում է յուրաքանչյուրի համար՝ անկախ նրանից, թե այլ սուբյեկտներ նույն հարցով անհատական

www.lawinstitute.am

սահմանադրական դիմում ներկայացրել են իրենց իրավունքի պաշտպանության նպատակով, թե՛ ոչ: Այս հարցի շրջանակներում Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ «սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում, եթե օրենքի 68-75-րդ և 77-րդ հոդվածներում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը»: Այս նորմում նշված հոդվածները նվիրված են (ի թիվս այլ հարցերի) սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող այլ սուբյեկտների՝ ներառյալ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից օրենքների դրույթների վիճարկմանը սահմանադրական դատարանում: Ստացվում էր մի իրավիճակ, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձի նկատմամբ կիրառվում է օրենքի դրույթ, սակայն տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձը չէր կարողանում օգտվել սահմանադրական արդարադատության իրավունքից, քանի որ օրենքի այդ դրույթն այլ սուբյեկտի դիմումի հիման վրա արդեն ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, այսինքն՝ առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշում: Այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանը այլ դիմումի հիման վրա կրկին քննության առարկա չի դարձնում այն հարցը, որն արդեն բարձրացվել է դատարանի առջև, միանգամայն իրավաչափ է, սակայն սա միևնույն ժամանակ կարող է արգելափակել այլ սուբյեկտներին՝ օգտվելու սահմանադրական արդարադատության միջոցով իրենց իրավունքները պաշտպանելու հնարավորությունից: Այդ հարցին անդրադարձել է ՀՀ սահմանադրական դատարանն իր 15 ապրիլի 2008 թվականի ՍԳՈ-751 որոշմամբ<sup>8</sup>: Այս որոշման 4-րդ կետում սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «այս կամ այն վիճարկվող ակտը կամ դրա դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ իր որոշման իրավական հետևանքները կապվում են ոչ միայն տվյալ ակտի, այլ նաև դրա հիման վրա կայացված դատական կամ վարչական ակտերի իրավական հետևանքների, այդ ակտերի հիման վրա մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ապահովման ու պաշտպանության հետ՝ որպես անմիջական գործող իրավունք»: Նույն որոշման 8-րդ կետում, վերլուծելով իրավակիրառական պրակտիկայի և Օրենքի 69-րդ հոդ-

վածի 12-րդ մասի, ինչպես նաև 32-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը, սահմանադրական դատարանը եկել է այն եզրահանգման, որ «այն անձինք, որոնց համար դեռևս չի լրացել սահմանադրական դատարանի դիմելու համար օրենքով սահմանված վեցամսյա ժամկետը, գրկվում են սահմանադրական դատարանի դիմելու միջոցով իրենց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից»<sup>9</sup>: Իսկ նման իրավիճակի ձևավորման պատճառ է դարձել այն փաստը, որ իրավակիրառական պրակտիկան «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասում օգտագործված «դիմող» եզրույթի բովանդակությանը տվել է սահմանափակ մեկնաբանություն:

Վերլուծելով օրենսդրությունը և իրավակիրառական պրակտիկան՝ սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-751 որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի դրույթները ճանաչել է «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը»<sup>10</sup>: Այս որոշման ողջ նպատակը սահմանադրական արդարադատության մատչելիության ապահովումն էր: Եթե նույնիսկ անձի կողմից տրված դիմումը ենթակա չէ քննության դիմումով բարձրացվող հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի ընդունած որոշման առկայության հիմնավորմամբ, ապա դա դեռ չի նշանակում, որ անձը չպետք է օգտվի այդ որոշման իրավական հետևանքներից:

ՀՀ Ազգային Ժողովի 26.10.2011 թվականի ՀՕ268Ն ՀՀ օրենքով փոփոխություններ կատարվեցին Օրենքի 69-րդ հոդվածում, որի 13-րդ մասը շարադրվեց հետևյալ խմբագրությամբ. «Մույն հոդվածի 12-րդ մասը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք սահմանադրական դատարանի տվյալ

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

որոշումը հրապարակելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել սահմանադրական դատարան»։ Նշված հոդվածի 12-րդ մասում նույնպես որոշակի փոփոխություններ և լրացումներ են կատարվել, համաձայն որոնց՝ «դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, **դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով**»։ Այս նորմերի համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե ֆիզիկական կամ իրավաբանական անձը դեռ պահպանում է սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, սակայն Օրենքի 32-րդ հոդվածի հիման վրա նրա՝ դիմումում բարձրացված սահմանադրաիրավական վեճը չի կարող սահմանադրական դատարանում քննության առարկա դառնալ, այնուամենայնիվ, չի զրկվում սահմանադրական արդարադատության մատչելիության իրավունքից, քանի որ նաև նրա նկատմամբ են կիրառելի սահմանադրական դատարանի որոշման իրավական հետևանքները։

Օրենքում կատարված այս փոփոխություններն էականորեն կնպաստեն սահմանադրական արդարադատության մատչելիության սկզբունքի երաշխավորմանը, սակայն կարծում ենք, որ հարցը դեռ ամբողջությամբ իր լուծումը չի ստացել, և գործնականում որոշակի խնդիր կարող է, այնուամենայնիվ, առաջանալ։ Այսպես՝ կարծում ենք, որ այստեղ երկակի իրավիճակ է ձևավորվում, այսինքն՝ կոնկրետ գործի նկատմամբ, որի շրջանակներում դիմում է ներկայացվել սահմանադրական դատարան, սահմանադրական դատարանն արտահայտում է իր իրավական դիրքորոշումը և նույնիսկ կարող է ընդձեռնել, որ օրենքի դրույթը կիրառվել է իր մեկնաբանություններից տարբերվող մեկնաբանությամբ, մինչդեռ մնացած գործերով, որտեղ անձը դեռ պահպանել էր սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, գնահատական տալու հայեցողությունը տրվել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտը վերանայելու իրավասու-

թյուն ունեցող դատարանին։ Օրենքի 69-րդ հոդվածի 13-րդ մասը հղում է կատարում նույն հոդվածի 12-րդ մասի վրա՝ սահմանելով, որ *12-րդ մասը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք սահմանադրական դատարանի տվյալ որոշումը հրապարակելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել սահմանադրական դատարան*։ Այսինքն՝ նաև սահմանադրական դատարան դիմելու իրավունքը դեռ պահպանած անձանց համար այդ որոշումը **կարող է լինել** նոր հանգամանք։ Սակայն մենք կարծում ենք, որ խոսքն ընդամենը հնարավորության մասին է, քանի որ որպեսզի սահմանադրական դատարանի որոշումը՝ որպես նոր հանգամանք, դառնա դատական ակտը վերանայելու պարտադիր հիմք, անհրաժեշտ է ևս մեկ պայմանի առկայություն։ Մասնավորապես Օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ որպեսզի դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա լինի վերանայման, անհրաժեշտ է, որ *սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, այն ճանաչի Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտնի, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ*։ Նշված նորմերի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել երկու պայման, որոնք բավարարելու դեպքում միայն դատական ակտը ենթակա կլինի վերանայման.

- եթե ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարանի տվյալ որոշումը հրապարակելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էր նույն հարցով սահմանադրական դատարան դիմելու իր իրավունքը,

- եթե սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ այդ դրույթը **նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ**։

Վերջին հաշվով Օրենքում կատարված փոփոխությունների համատեքստում սահմանադրական արդարադատության մատչելիության սկզբունքի իրացումը կերաշխավորվի միայն դատարանների կողմից նշված հայեցողությունը բարեխիղճ իրականացնելու և օրենքի դրույթը սահմա-

նադրական դատարանի իրավական դիրքորոշումներին համահունչ մեկնաբանելու արդյունքում: Սակայն գտնում ենք, որ այս հարցում դատարանները չեն կարող որևէ հայեցողություն ունենալ: Օրենքով սահմանադրական դատարանին է վերապահված բացահայտել վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը և գնահատել դրա կիրառման իրավաչափությունը կոնկրետ սուբյեկտի նկատմամբ, ուստի սահմանադրական դատարանը պետք է օժտված լինի լիազորությամբ՝ գնահատելու բոլոր այն դեպքերում, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք դեռ պահպանել են սահմանադրական դատարան դիմելու իրավունքը: Հետևաբար գտնում ենք, որ Օրենքում պետք է լրացումներ կատարվեն, որոնցով կամրագրվի, որ սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց անհատական դիմումի հիման վրա դատական կազմը կամ սահմանադրական դատարանը՝ ամբողջ կազմով, մերժելով գործը քննության ընդունել, միաժամանակ կարող է գնահատել նորմի կիրառման իրավաչափությունը և գտնել, որ դրույթը **նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, ինչը նոր միայն կհանդիսանա նոր հանգամանք դատական ակտը վերանայելու համար:** Հակառակ պարագայում, եթե սահմանադրական դատարանն իր որոշումներից որևէ մեկում չանդրադառնա կոնկրետ սուբյեկտների նկատմամբ նորմի կիրառման պրակտիկային, երբեք սահմանադրական դատարանի որոշումը չի հանդիսանա նոր հանգամանք այն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, ովքեր սահմանադրական դատարանի տվյալ որոշումը հրապարակելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել սահմանադրական դատարան:

Հաջորդ խնդիրը վերաբերում է հետևյալ իրավիճակին. Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերի հիման վրա սահմանադրական դատարանն ամբողջությամբ կամ մասամբ մերժում է գործի քննությունը՝ անկախ այն հանգամանքից, թե սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող որ սուբյեկտի<sup>11</sup> դիմումի հիման վրա է նախկինում դատարանը կայացրել որոշում կամ իրականացնում գործի դատաքննություն: Օրենքի 69-րդ հոդվածի իրավակարգավորումները՝ ներառյալ փոփոխությունները, վերաբերում են անհատական դիմումների քննությանը: Նշված հոդվածի 13-րդ կետի բովանդակության վերլուծությունը ցույց է

տալիս, որ այն նույն հոդվածի 12-րդ մասը տարածվում է իրավաբանական և ֆիզիկական անձանց վրա, իսկ 12-րդ մասը, կիրառելով «Սույն հոդվածում նշված գործերով» բառակապակցությունը, շեշտադրում է, որ այդ մասում նշված իրավական հետևանքները կարող են վրա հասնել միայն անհատական դիմումների հիման վրա կայացվող որոշման արդյունքում: Ստացվում է, որ օրենսդրի կողմից սահմանվել է այնպիսի իրավակարգավորում, որով լուծվել է անհատական դիմումով այլ անձանց՝ սահմանադրական արդարադատության միջոցով սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության իրավունքի իրացմանը չխոչընդոտելու հարցը: Միաժամանակ բաց է մնում այն հարցը, թե ինչպես է հնարավոր երաշխավորել սահմանադրական արդարադատության մատչելիությունը, եթե դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթը նախկինում սահմանադրական դատարանում վիճարկվել է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ, 8-րդ կետերում նախատեսված անձանց և մարմինների կողմից: Նշված անձանց և մարմինների դիմումների հիման վրա գործերի քննության առանձնահատկություններն ամրագրված են Օրենքի 68-րդ հոդվածում<sup>12</sup>, որտեղ ամրագրված չեն սահմանադրական դատարանի որոշումների այնպիսի իրավական հետևանքներ, ինչպիսիք որ առկա են Օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ մասերում:

ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-751 որոշման 5-րդ կետում<sup>13</sup>, անդրադառնալով կոնկրետ և վերացական վերահսկողության առանձնահատկություններին, նշել է, որ «*Եթե նախնական և հետագա վերացական սահմանադրական վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ իրավական համակարգում օրենքների և այլ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ապահովելու ճանապարհով, ապա անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը*<sup>14</sup>»: Թեև սահմանադրական դատարանը հստակ տարանջատում է կոնկրետ և վերացական վերահսկողության նպատակները, դրանք, մեր կարծիքով, չեն կարող հիմք հանդիսանալ սահմանադրական արդարադատության մատչելիությունը սահմանափա-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

կելու համար, հետևաբար վերացական վերահսկողության նպատակները չեն կարող բացառել կոնկրետ վերահսկողության նպատակները:

Այս տեսանկյունից ուշագրավ է նաև իրավիճակը՝ կապված գլխավոր դատախազի և դատարանների՝ դիմումների հիման վրա գործերի քննության հետ: Օրենքի 71-րդ հոդվածը կարգավորում է դատարանների և գլխավոր դատախազի դիմումների հիման վրա նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության հետ կապված իրավահարաբերությունները՝ հոդվածի վերնագրում փակագծերում ամրագրելով *«իրավական նորմերի կոնկրետ վերահսկողություն»*: Թեև այս դիմումները քննվում են կոնկրետ վերահսկողության շրջանակներում, դրանց արդյունքում սահմանադրական դատարանի կայացրած որոշման իրավական հետևանքները որոշվում են Օրենքի 68-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, քանի որ նշված 71-րդ հոդվածի 10-րդ մասը հղում է կատարում 68-րդ հոդվածի 7-17-րդ մասերի վրա: Իսկ վերջիններս, ի թիվս այլ հարցերի, կարգավորում են նաև սահմանադրական դատարանի որոշումների իրավական հետևանքները: Կարծում ենք, որ սահմանադրական արդարադատության մատչելիության սկզբունքը պահանջում է, որ այս գործերի քննության արդյունքում կայացված որոշումների իրավական հետևանքները կարգավորվեն նաև Օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ մասերում ամրագրված նորմերով:

Վերլուծելով վերոնշյալ բոլոր նորմերը, ինչպես նաև դրանց հետ համակարգային փոխկապվածության մեջ գտնվող այլ նորմերը՝ կարծում ենք՝ պետք է հստակ շեշտադրել այն միտքը, որ սահմանադրական վերահսկողության ինչպիսի ձև էլ ամրագրվի օրենսդրության մեջ, այն չպետք է խոչընդոտ հանդիսանա սահմանադրական արդարադատության մատչելիության սկզբունքի լիարժեք երաշխավորման համար: Գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ իրավունքի մի սուբյեկտի կողմից սահմանադրական դատարան դիմելն արդեն արգելափակի իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից սահմանադրական արդարադատության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունը: Դատարանների կողմից կամ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու և դրա հիման վրա որոշում ընդունելու փաստը չի կարող արգելել ֆիզիկական և իրավա-

բանական անձանց օգտվել սահմանադրական դատարանի դիմելու միջոցով իրենց հիմնարար իրավունքները և ազատությունները պաշտպանելու հնարավորությունից: Կարծում ենք, որ օրենսդիրը պետք է այս տրամաբանության հիման վրա սահմանի սահմանադրական դատարանի մատչելիության, սահմանադրական դատարանի որոշումների իրավական հետևանքների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող նորմեր:

**Ամփոփելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ**

1. Սահմանադրական արդարադատության մատչելիության սկզբունքն իր մեջ ներառում է անձի իրավունքը *«Սահմանադրական դատարանի մասին»* ՀՀ օրենքով նախատեսված կարգով դիմել սահմանադրական դատարան, որի հիման վրա կիրականացվի գործի քննություն, և ստանալ իր գործի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումը: Խնդրո առարկա հարցի վերաբերյալ, մասնավորապես, սահմանադրական դատարանի դիմելու իրավունքի մաս է կազմում, ի թիվս այլ իրավունքների, անձի իրավունքը ստանալ սահմանադրական դատարանի որոշում, որով վերջինս, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, այն կճանաչի Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ կզտնի, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, ինչն էլ իր հերթին կհանգեցնի դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի՝ օրենքով սահմանված կարգով վերանայմանը՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով: Այս մոտեցումը, կարծում ենք, համահունչ է նաև ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշմանը, ըստ որի *«Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև անհատական շահերի պաշտպանության խնդիրը»*<sup>15</sup>,

2. Սահմանադրական դատարանի մատչելիությունը պետք է երաշխավորվի յուրաքանչյուրի համար՝ անկախ նրանից, թե այլ սուբյեկտներ կոնկրետ սահմանադրաիրավական վեճի առնչությամբ նախկինում սահմանադրական դատարան դիմել են, թե ոչ, որպեսզի հնարավոր դառնա անհատական շահերի արդյունավետ պաշտպանությունը,

3. Օրենքում պետք է լրացումներ կատարվի, որոնք սահմանադրական դատարանին հնարավորություն կտան, մերժելով անհատական դիմումի

www.lawinstitute.am

հիման վրա գործը քննության ընդունումը, միաժամանակ իր դիրքորոշումն արտահայտել կոնկրետ գործի շրջանակներում օրենքի վիճարկվող դրույթն այլ մեկնաբանությամբ կիրառելու փաստի վերա-

բերյալ, որը նույնպես նոր հանգամանք կհանդիսանա դատական ակտը վերանայելու համար:

<sup>1</sup> Այսուհետ՝ ՄԻԵԿ:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի.-Երևան, «Իրավունք», 2010, էջ 222: Այսուհետ՝ ՀՀ ՍԳ և ՄԻԵԿ:

<sup>3</sup> Այսուհետ՝ Օրենք: Օրենքը հասանելի է ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում՝ [http://www.concourt.am/armenian/law\\_cc/index.htm](http://www.concourt.am/armenian/law_cc/index.htm):

<sup>4</sup> Տե՛ս Marini v. ALBANIA, judgment of 18 December 2007, §112, Golder v. the United Kingdom, judgment of 21 February 1975, §§ 35-36, Acts of ECHR are available at HUDOC Search Portal, <http://cmiskp.echr.coe.int/tkp197/search.asp?skin=hudoc-en>:

<sup>5</sup> Տե՛ս Marini v. ALBANIA, judgment of 18 December 2007, §113. , Acts of ECHR are available at HUDOC Search Portal, <http://cmiskp.echr.coe.int/tkp197/search.asp?skin=hudoc-en>.

<sup>6</sup> «Յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով», «դատարանի վերջնական ակտ», «սպառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները», «կիրառված օրենքի դրույթ» բառակապակցությունները սույն աշխատանքի քննարկման առարկա չեն, ուստի դրանց բովանդակության վերլուծությանն այս աշխատանքում չենք անդրադառնա:

<sup>7</sup> Օրենքի իմաստով նշանակություն չունի այն հանգամանքը՝ արդյոք կոնկրետ վերահսկողության, թե վերացական վերահսկողության շրջանակներում է օրենքի դրույթը վիճարկվել:

<sup>8</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 1(50)2009, էջ 51:

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 1(50)2009, էջ 56:

<sup>10</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 1(50)2009, էջ 61-62:

<sup>11</sup> ՀՀ սահմանադրական դատարանի հիմնելու իրավունք ունեցող սուբյեկտներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածում:

<sup>12</sup> Իրավական նորմերի սահմանադրականության վերացական վերահսկողություն՝ ըստ Օրենքի 68-րդ հոդվածի վերնագրի:

<sup>13</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 1(50)2009, էջ 53:

<sup>14</sup> Կոնկրետ և վերացական վերահսկողության առանձնահատկություններին, բնորոշ գծերին նվիրված են բազմաթիվ գիտական աշխատանքներ, որոնցից կարելի է նշել հետևյալը՝ Հարությունյան Գ.Գ. *Սահմանադրական վերահսկողություն*, «Նժար» հրատ., Երևան-2002, էջ 58-61:

<sup>15</sup> ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 1(50)2009, էջ 54:

РЕЗЮМЕ

***Равный доступ к Конституционному Суду как один из принципов конституционного правосудия: проблемы законодательного регулирования***

В статье рассматриваются актуальные вопросы доступа к Конституционному Суду как одного из неотъемлемых принципов конституционного правосудия, полноценная реализация которого является необходимым условием эффективной защиты конституционных прав и свобод человека. Автор исследует законодательные нормы, направленные на обеспечение реализации указанного принципа. В результате системного анализа нормативной базы автор приходит к выводу о необходимости внесения в действующее законодательство поправок и дополнений, которые обеспечили бы равные для всех возможности доступа к конституционному правосудию независимо от того, какой субъект и когда обращается в Конституционный Суд.

SUMMARY

***Equal Access to the Constitutional Court as One of the Principles of Constitutional Justice: Problems of Legislative Regulation***

In this article, the Author discusses the current issues of the access to the Constitutional Court as one of the constituting principles of constitutional justice, proper implementation of which is essential for the effective protection of constitutional rights and freedoms. The Author examines the legislative rules aiming at ensuring the implementation of this principle. On the basis of system analysis of national legislation, the Author concludes that it is necessary to amend and supplement the legislation in force with the rules providing equal opportunities of the access to constitutional justice for everybody, regardless of the status of an applicant and the time of his or her applying to the Constitutional Court.